

Քսան տարի առաջ, 1943 թ. նոյեմբերին, Երևանում հիմնադրուեց Հայկական Հանրապետության Գիտությունների Ակադեմիան:

Մինչ սովետական կարգերի հաստատումը, ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ նրանից դուրս, Ռուսաստանում ու արևմտաեվրոպական մի շարք երկրներում, աշխատում էին ծագումով մի շարք հայ գիտնականներ, որոնք աշխատանք էին կատարում թէ՛ բնական, եւ թէ՛ հասարակական գիտությունների բնագավառում, մասնաւորապէս հայագիտութեան ասպարէզում:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից յետոյ, մեր ժողովրդի պատմութեան մէջ առաջին անգամ հնարաւորութիւն ստեղծուեց մէկ գիտական կենտրոնում՝ Երևանի նորաստեղծ պետական համալսարանում համախմբել գիտութեան տարբեր ճիւղերի մի շարք աշխատող հայ գիտնականների, որոնց ջանքերով սկսուեց սովետահայ գիտութեան բուն գարգացման եւ գիտական երիտասարդ կազմերի պատրաստման ջրջանը:

1930ական թթ. ընթացքում, համալսարանի տարբեր ֆակուլտետների հիման վրայ, ստեղծուեցին գիտական նոր օճախներ՝

բարձրագոյն ուսումնական հաստատութիւններ՝ մասնաւորապէս բնական գիտությունների գծով: Հիմնադրուեց նաեւ առաջին գիտահետազոտական հաստատութիւնը՝ Գիտութեան եւ արուեստի ինստիտուտը, ուր կենտրոնացուեցին հասարակական մի շարք գիտությունների (մասնաւորապէս լեզուի, գրականութեան, պատմութեան եւ հնագիտութեան) գծով կատարուող աշխատանքները: Գիտահետազոտական աշխատանքները լայն թափ ստացան նաեւ համալսարանի ու նորաստեղծ մի շարք բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների ամբիոններում:

Նախքան Ս. Միութեան Գիտությունների Ակադեմիայի հայկական Ֆիլիալի հիմնադրումը (1935), մեղանում զարգացած էին գլխաւորապէս հասարակական մի շարք գիտություններ, ըստ որում հայագիտութեան բնագավառում աւագ սերնդի շատ գիտնականների բարձրագէջ աշխատանքները յայտնի էին նաեւ մեր երկրի սահմաններից հեռու ընկած գիտական կենտրոններում: Ակադեմիայի հայկական Ֆիլիալի ստեղծումով Սովետական Հայաստանում սկսուեց գիտութեան զարգացման նոր շրջանը. հիմք դրուեց մի շարք այնպիսի գիտական

ուղղութիւնների, որոնք կա՛մ բուրրոյթին նոր էին հայկական իրականութեան մէջ եւ կա՛մ ունէին հատուկ կենտ ներկայացուցիչներ, այն էլ մեծ մասամբ Հայաստանի սահմաններից դուրս: Այդ ուղղութիւններից մի քանիսը, մասնաւորապէս Ֆիզիկա - մաթեմատիկական մի շարք գիտություններ, յետագայում հասան մեծ յաջողութիւնների:

Այսպիսով, 1940ական թթ. սկզբին, Ս. Միութեան Գիտությունների Ակադեմիայի լայն օղնութեան եւ օժանդակութեան պայմաններում, արդէն ստեղծուել էին այն բուրր նախադրուելները, որ անհրաժեշտ էին հայկական գիտությունների աւելանալու պայմաններում համար առկայ էին ոչ միայն գիտական աշխատանքի աւանդութիւնները, այլեւ որակեալ կազմեր՝ թէ՛ հասարակական եւ թէ՛ բնական մի շարք գիտությունների գծով: Գիտությունը հեշտանում էր նաեւ այն հանգամանքի շքանորհիւ, որ մի շարք յայտնի հայ գիտնականներ, որոնք աշխատում էին Սովետական Միութեան տարբեր քաղաքներում (յատկապէս Մոսկուայում ու Լենինգրադում), կամ արդէն ներգրաւուած էին Ս. Միութեան Գիտությունների Ակադեմիայի հայկական Ֆիլիալի տարբեր ինստիտուտներում, պատրաստակամութիւն էին յայտնել շուտով սեղափոխուել Հայաստան:

Ահա այս պայմաններում 1943 թ. նոյեմբերի 25ին, Սովետական Հայաստանի կառավարութեան միջնորդութեան հիման վրայ, Սովետական Միութեան Մինիստրների սովետը որոշեց Հայաստանում հիմնադրել գիտությունների ազգեմիա: Հաստատուեց ազգեմիայի կառուցումը եւ նրա իսկական անդամների առաջին կազմը:

Ազգեմիայի առաջին կազմում հաստատուեցին Ա. Ի. Ալիխանովը, Ա. Ի. Ալիխանեանը, Ի. Վ. Եղիազարեանը, Վ. Ի. Իսապուլեանը, Ա. Ա. Յակոբեանը, Վ. Հ. Համբարձումեանը, Կ. Ն. Պաֆենտը (Ֆիզիկա-մաթեմատիկական եւ բնական գիտությունների գծով), Մ. Խ. Արեղեանը, Հ. Հ. Աճառեանը, Ա. Ս. Իսահակեանը, Գ. Ա. Ղափանցեանը, Ս. Ս. Մալխասեանը, Յ. Հ. Մանանդեանը, Ա. Հ. Տէրտէրեանը, Յ. Ա. Օրբելին (հասարակական գիտությունների գծով), Հ. Խ. Բունիաթեանը, Վ. Հ. Գուլբանեանը, Խ. Ս. Կոչտոյեանցը, Լ. Ա. Օրբելին (կենսաբանական գիտությունների գծով), Ա. Չ. Թամաձեւը, Մ. Գ. Թումանեանը, Ս. Կ. Կարապետեանը (գիւղատնտեսական գիտությունների գծով), Լ. Ա. Յովհաննիսեանը (բժշկական գիտությունների գծով), ընդամէնը 23 հոգի:

Ազգեմիայի առաջին նախագահ ընտրուեց Ս. Միութեան Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Յովսէփ Օրբելին, փոխ-նախագահներ՝ Ս. Միութեան ԳԱ թղթակից-անդամ Վիկտոր Համբարձումեանը եւ Հայաստանի ԳԱ իսկական անդամ Վարդան Գուլբանեանը:

Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի հիմնադրումը վերածուեց համաժողովրդական տօնի, որին հայ ժողովրդի հետ միասին մասնակցեցին նաեւ ուրիշ վրաց, ադրբեջանական ժողովուրդների ներկայացուցիչները:

Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի իր հիմնաւորման առաջին օրերին կազմուած էր գիտությունների շորս բաժանմունքից (Ֆիզիկա-մաթեմատիկական եւ բնական գիտությունների բաժանմունք, կենսաբանական գիտությունների բաժանմունք, գիւղատնտեսական գիտությունների բաժանմունք եւ հասարակական գիտությունների բաժանմունք), որոնք միաւ-

(Շարք տեսնել Գ. էջ)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պատուարժան խմբագրութիւն «Պայքար» օրաթերթի Պոսթոն «Պայքար»-ի 29 Յունուար 1964 թիւին մէջ որպէս հետաքրքրական լուր տրուած էր Փարիզէն հայ երաժշտի մը Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Գեղարուեստից Թանգարանին զրկած նուէրը - իտալացի երգահան Սկարլատի «Տիգրան» օփերային փարթիսիոնը:

Մեծն Տիգրանի մասին բազմաթիւ օփերաներ գրուած են, մա՛նաւանդ 18րդ դարուն: Անոնց գոնէ անուններուն ծանօթացող հայ մը, ինչպէս ես, բազմաթիւ պիտի համարէր գիտնալ այդ օփերաներուն լիփրեթթօները, տեսնելու համար թէ արդեօք մեր մեծապանծ արքան ի՞նչպէս ներկայացուած է անոնց մէջ:

Փարիզ եւ Իտալիա բնակող հայ երաժիշտներու պրպտուէր հաւանաբար ի յայտ բերէ սոյն օփերաներէն չկարուածները:

Տիգրանի մասին գրուած եւ ԲԵՄԱԳՐՈՒՄ օփերաներէն ցանկ մը կուտամ: (Հաւանաբար չբեմադրուածներ այ եղած են): Երանի՜ թէ գտնուէին հայ երաժիշտներ, որ յօժարէին փնտռուէր ի յայտ բերելու գոնէ քանի մը, հատը: Եւ, ո՞վ գիտէ, իրենց խուզարկումէն յարանուած, մէկը կամ միւսը ներշնչում ստանար հայկական օփերա մը գրելու - հայ արքայ, հայ երգահան, հայ լիփրեթթօթ:

- Albioni, T. (1673-1745) - Tigrane, re d'Armenia
- Arena, G. (1708 - ?) - Tigrane
- Bononcini, M. A. (1675-1726) - Tigrane, re d'Armenia
բեմադրուած Վիեննա, Յուլիս 26, 1710
- Celoniati, I. (1739 - ?) - Tigrane
- Colla, G. (1730-1806) - Tigrane
- Gasparini, F. (1668-1737) - Tigrane
- Gluck, C. W. (1714-1787) - Tigrane
բեմադրուած Կրեմա, 1743
- Guglielmi, P. (1727-1804) - Tigrane
Հոկտեմբեր 27, 1767
- Hasse, J. A. (1699-1783) - Tigrane
Նախոյի, Նոյեմբեր 4, 1723
- Lampugnani, G. B. (1706-1790) - Tigrane
Վենետիկ, 1747
- Paganelli, G. I. (1717 - ?) - Tigrane
- Piccini, N. (1728-1900) - Tigrane
- Righini, V. (1756 - 1812) Tigrane (overture-ը օտս ժողովրդական եր)
- Lapis-Santo (1709 - ?) - Tigrane
- Scarlatti, A. (1659-1725) - Tigrane, ovvero, l'Equal
(L), impegno d'amor
- Tozzi, A. (1736-1315) - Tigrane

Անկեղծօրէն՝ ՀՐԱՆՏ ԱՐՄԷՆ

(Ինկլըուուտ, Քալիֆորնիա)

տարար ունի արդէն վարժարանի շինութեան ֆոնտի կեդրոնական մարմինը: Կը մնայ գոյացնել մնացեալ գումարը: Եւ այս նպատակով է, ահա, որ կը կազմակերպուի վերջին հանգանակութիւնը՝ հոս թէ Միացեալ Նահանգներուն մէջ, որպէս զի Հայ Դպրոցի անկեղծ բարեկամները իրենց սրտարուխ նուիրատուութիւններով ամբողջական յաջողութեան վերածեն շինութեան ձեռնարկը:

Մենք վստահ ենք որ ամերիկահայ, լիրանանահայ թէ սուրիահայ բարեսէր ազգայիններ անպատասխանի պիտի չձգեն շինութեան ֆոնտի կեդրոնական մարմինին կոչը, եւ պիտի օգտագործեն այս առիթը՝ ժպիտ ծաղկեցնելու համար ուսումնաստենչ բազմահարբուր երկեսն ուսանողներու հայու աղուոր աչքերուն ու մաքուր սիրտերուն մէջ:

ուղղութիւնների, որոնք կա՛մ բուրրոյթին նոր էին հայկական իրականութեան մէջ եւ կա՛մ ունէին հատուկ կենտ ներկայացուցիչներ, այն էլ մեծ մասամբ Հայաստանի սահմաններից դուրս: Այդ ուղղութիւններից մի քանիսը, մասնաւորապէս Ֆիզիկա - մաթեմատիկական մի շարք գիտություններ, յետագայում հասան մեծ յաջողութիւնների:

Իր քանոնադրերի օրը ակադեմիան միաժամ և 26 հիմնարկներ, որոնք մտնում են ֆիզիկա-մաթեմատիկական, տեխնիկական, կենսաբանական, հասարակական գիտությունների բաժանմունքների մէջ: Տարբեր բաժանմունքներում ակադեմիայի կազմում որպէս ակադեմիկոսներ եւ թղթակից-անդամներ ընտրուել են գիտություն տարբեր բնագաւառների նոր անունների կայացուցիչներ:

Ակադեմիկոսներ են ընտրուել Գ. Ա. Աղաջանեանը, Ա. Ա. Առաքելեանը, Գ. Հ. Բարաջանեանը, Գ. Ս. Դաւթեանը, Ս. Տ. Երեմեանը, Ա. Ղ. Իոսիֆեանը, Ա. Ի. Խաչատրեանը, Մ. Վ. Կասեանը, Ա. Բ. Կարինեանը, Ն. Խ. Յարութեանը, Ա. Ռ. Յովհաննիսեանը, Ա. Գ. Յովհաննիսեանը, Ա. Ս. Ղարիբեանը, Մ. Գ. Մանուկեանը, Հ. Գ. Մաղաքեանը, Ս. Ն. Մերգերեանը, Ս. Ս. Մկրտչեանը, Ա. Լ. Մնջոյեանը, Ա. Բ. Նալբանդեանը, Ա. Գ. Նազարովը, Մ. Գ. Ներսիսեանը, Ա. Լ. Շահինեանը, Մ. Մ. Ջրբաշեանը, Մ. Ս. Սարեանը, Ա. Մ. Տէր Կարապետեանը, Բ. Ա. Ֆանարջեանը:

Ակադեմիայի կազմում այժմ կայ 39 իսկական եւ 32 թղթակից-անդամ:

1947 թ. սկսած անընդմէջ ակադեմիայի նախագահ է ընտրուում ակադեմիկոս Վիկտոր Համբարձումեանը: Փոխ-նախագահներ են ընտրուել ակադեմիկոսներ Վ. Հ. Գուլբանեանը, Ա. Ղ. Իոսիֆեանը, Մ. Գ. Ներսիսեանը, Ա. Լ. Մնջոյեանը, Ն. Խ. Յարութեանը, Ա. Ռ. Յովհաննիսեանը, Հ. Խ. Բունիաթեանը:

Անցած տարիների ընթացքում աննախընթաց կերպով աճեցին ակադեմիայի ընդհանուր և հասարակական գիտությունների բաժանմունքների ծախսերը, ամբաստանողների և թղթակից-անդամների ծախսերը: Ֆինանսական յատկացումները 1943 թ. 16-5 միլիոն ուրբուց 1963 թ. սկզբներին հասան 98 միլիոն ուրբուց, կապիտալ շինարարութեան համար յատկացուած գումարը՝ 1-1 միլիոն ուրբուց մօտ 30 միլիոն ուրբուց: Մի շարք ինստիտուտների համար կառուցուեցին նոր շէնքեր: Չեռք բերուեցին գիտական թանկարժէք եւ նորագոյն սարքեր:

Գիտական եւ գիտատեխնիկական աշխատողների թիւը 410 մարդուց հասաւ աւելի քան 3100ի: Եթէ 1943 թ. ակադեմիայի ցանցում աշխատողներից գիտությունների թեկնածու կամ դոկտոր էին միայն 58ը, ապա այժմ նրանց թիւը հասնում է 510 հոգու: 1343 թ. 128 մամուլ ծաւալով հրատարակուած 43 անուն աշխատութեան փոխարէն՝ 1963 թ. հրատարակուած է 152 աշխատութիւն՝ 1900 մամուլ ծաւալով, 195 հազար տպագրանակով:

Կանոնաւոր կերպով հրատարակուած են գիտական ամսագրեր՝ ակադեմիայի «Տեղեկագիրը», ֆիզիկա-մաթեմատիկական, կենսաբանական, քիմիական, երկրաբանական, տեխնիկական, հասարակական գիտությունների շարքերով, «Էֆսոպերիմենտալ բժշկութիւն» ամսագիրը, «Պատմա-բանասիրական հանդէսը», «Հայկական ՍՍ ԲԱ գեկոյցները»: Այդ նոյն ժամանակամիջոցում գրադարանային ֆոնդը 130 հազարից հասաւ մօտ 1-9 միլիոնի:

Վերջին տասը տարիները հանդիսացան սովետական գիտությունների հուշարձանների հարմարեցումը: Հայրենական գիտությունների մէջ էլ աւելի աւելի բարձր հնչեց Հայաստանի գիտականների ձայնը, որոնք նոր եւ ինքնատիպ շատ բան են մտցրել հայրենական եւ համաշխարհային գիտությունների մէջ: Լայն ճակատով հետազոտական աշխատանքներ տարուեցին գիտությունների անաւել կարեւոր ճիւղերում, որոնք ունեն ինչպէս տեխնիկական, այնպէս էլ ժողովրդական տնտեսական խոշոր նշանակություն:

Յատուկ ուշադրութիւն դարձուեց գիտությունների զարգացման եւ ուղղութիւնների զարգացման եւ գիտական նոր կենտրոններ ստեղծելու հարցին: Հայաստանում առաջացան եւ զարգացան գիտական աշխատանքի այնպիսի ուղղութիւններ, ինչպիսիք են՝ աստրոֆիզիկան, ռադիոֆիզիկան, հաշուողական մաթեմատիկան, էլեկտրոնիկան, կիրառական ֆիզիկան, գէոֆիզիկան, նուրբ օրգանական քիմիան, բիոքիմիան, բոյսերի ֆիզիոլոգիան, քիմիական ֆիզիկան, ռադիոբիոլոգիան, բիոֆիզիկան եւ գիտությունների այլ ճիւղեր, որոնք մինչեւ ակադեմիայի ստեղծումը հանրապետութիւնում ներկայացուած էին:

Նոր գիտցիպիւնների գծով գիտական աշխատանքի պահանջը մեծ մասամբ առաջացաւ հանրապետութեան ժողովրդական տնտեսութեան կողմից առաջադրուած խնդիրները լուծելու անհրաժեշտութիւնից: Ընդլայնուեցին աշխատանքները նաեւ կենսաբանական եւ հասարակական գիտությունների այս գիտցիպիւնների գծով, որոնք մինչեւ ակադեմիայի կազմակերպուելը հանրապետութիւնում հասել էին որոշ յաջողութիւնների:

Տիեզերքի վերաբերեալ գիտությունների զարգացման մէջ կարեւորագոյն դեր է կատարում Բիւրականի աստղադիտարանը, որն իր տեխնիկական հզօրութեամբ եւ կատարած աշխատանքներով վերածուեց աշխարհում ամենաառաջնակարգ աստղադիտարաններից մէկը. նրա հետ կապ են պահպանում 136 աստղադիտարաններ: Գիտական կոլեկտիվի հետազոտութիւնների շնորհիւ աստղադիտությունների մէջ առաջացան նոր ուղղութիւններ, որոնք ներկայացնում են նոր մօտեցում դէպի Տիեզերքի կառուցուածքի եւ նրա եղաշրջման հարցը:

Բիւրականի աստղագէտների ստացած արդիւնքներն ունեն սկզբունքային նշանակութիւն աստղադիտությունների զարգացման համար, գտնուած են համաշխարհային զիտական հասարակարկային ուշադրութեան ուշադրութեան արդիւնքներ են ըստացուել կոսմոսիկական ճանաչողութեան կազմութեան մէջ մտնող տարրական մասնիկների ուսումնասիրութեան բնագաւառում: Մշակուել են նաեւ կարեւոր տեսական հարցեր՝ կապուած միջուկային ֆիզիկայի արդի խնդիրների հետ: 1958 թ. սկսած ինստիտուտը զբաղուած է էլեկտրոնային օդակային հզօր արագացուցիչի նախագծմամբ եւ կառուցմամբ:

Արժէքաւոր աշխատանքներ են կատարուած Աստղադիտարանի կազմից 1959 թ. անջատուած ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտի և Բիւրականի կոլեկտիվում՝ դերբարձր յաճախականութեան անտենային սխեմայի մեծ երկհաշիւանոց անտենայի ստեղծման ուղղութեամբ: Մշակուած եւ ստեղծուած են մի շարք բացառիկ սարքեր եւ գործիքներ, յատկապէս ռադիոտեխնիկայների համար, որոնց նշանակությունը գնալով մեծանում է ռադիոաստղադիտությունների մէջ:

Հաշուողական կենտրոնում կարեւոր աշխատանքներ են կատարուած հաշուողական մաթեմատիկայի, տեսական կիրառական մաթեմատիկայի, մաթեմատիկական լեզուաբանութեան՝ եւ մեքենայական թարգմանութեան բնագաւառում: Լուծուած են մի շարք կարեւոր կիրառական նշանակություն ունեցող խնդիրներ, կատարուել է մասնագիտական տեքստի առաջին մեքենայական թարգմանութիւնը՝ ռուսերէնից հայերէն:

ՀԻՆԷՆ ՆՈՐԷՆ
ՍԱՐԷՆ ՉՈՐԷՆ

ԱԳՌԱԻՆԵՐԸ ԹԱՌԵՑԱՆ...

Հիւանդանոցին տեսուչը ատու մը քիւ 11 սրաքը կը մտնէ եւ հիւանդապահի մը կը հարցընէ, քէ 15րդ անկողինին հիւանդը ի՞նչպէս անցուց նոյն գիշերը:
- Գէշ, տէ՛ր. երեք ագռաւ փսխեց:
- Ինչպէ՛ս. ի՞նչ կ'ըսէ՛ք. երեք ագռա՞ւ:
- Այո՛, երեք ագռաւ, տէ՛ր: Տեսուչը չ'ուզեք հաւատալ իր ականջներուն. իրեն ընկերացող բժիշկները քահ քահը կը ձգեն:
- Այս ագռաւները ո՞ղջ էին, կը հարցնէ բժիշկներէն մէկը:
- Չեմ գիտեր տէր, Յակոբոսը քաւ ինձի:
- Կանչեցէ՛ք Յակոբոսը:
- Յակոբոս շուտ մը կը հասնի:
- Հիւանդապահ, կ'ըսէ ատու տեսուչը. դո՞ւն քիւ որ քիւ 15 հիւանդը երեք ագռաւ փսխեց:
- Ե՞ս. ամենեւին, տէր, ես երկու ագռաւ քիւ:
- Երկու՞, դո՞ւն տեսա՞ք գանձ:
- Ո՛չ, անոր հիւանդապահը ես չէի. Ղազարն էր, ես անկէ իմացայ:
- Ղազարը ինձի կանչեցէ՛ք:
- Ահա, ահա՛. պարոն քր-ժիշկ, կը պատասխանէ իսկոյն խոշոր ձայն մը:

- Ղազար, դո՞ւն քիւր Յակոբոսին որ քիւ 15 հիւանդը երկու ագռաւ փսխած է:
- Ես երկուք չըսի, տէր. մէկ ագռաւ միայն քիւ, եւ նշմարիտը ատ է:
- Մէ՞կ ագռաւ միայն, կը գոչէ Եսիւպայի աշակերտը: Ինչէ՛ն հասկցար որ ագռաւ էր ան. դո՞ւն գայն տեսա՞ք:
- Ես չտեսայ, տէր. արդէն չըսի որ տեսած եմ, այլ հիւանդապահ կինը, Սուրբիկը ինձի քաւ որ քիւ 15ը ագռաւ մը փսխած է:
- Ըսէ՛ք Սուրբիկին, քաւ այն ատեն տեսուչը, որ շուտով հաս գայ:
Սուրբիկ կը հասնի:
- Սուրբի՛կ, դո՞ւն քիւր Ղազարին քէ քիւ 15ը ագռաւ մը փսխած է:
- Ամենեւին, տէր, կը պատասխանէ կինը ժպտելով, ես ըսի քէ ինչո՞ք քիւ 15ը գիշերը փսխեց ու փսխուէր սեւ էր ագռաւի մը պէս: Աս էր քաւս, խաչ վկայ:
Տեսուչը, Սուրբիկը, բժիշկները, հիւանդապահները, հիւանդները խնդալէն կը մարին, իսկ քիւ 15ին փսխած ագռաւները առածի կարգ կ'անցնին՝ ցոյց տալու համար քէ ի՞նչպէս լուր մը կամ խօսք մը «բերնէ բերան կ'ըլլայ գերան»...

(Շար. 2)